ՀՏԴ 72.03.6

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ս. Բ. Օհանյան,
Ն. Տ. Բարսեղյան

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՄԵՐՁ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Միջազգային և տեղական փորձի հիման վրա կատարվել է հանրապետության հիմնական մայրուղիների ճանապարհամերձ սպասարկման օբյեկտների ամբողջական դասակարգում՝ ելնելով դրանց գործառնական և նպատակային նշանակությունից և հաշվի առնելով դրանց անհրաժեշտությունն ու գոյության նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետության տարածքում: Այս ուղղությամբ բերվում են նաև նոր մոտեցումներ և առաջարկություններ, որոնց իրականացումն էապես կավելացնի հանրապետության հիմնական մայրուղիների վրա ծառայությունների տեսակները, կբարելավի ճանապարհային սպասարկման որակը, կխթանի հարակից բնակավայրերի տնտեսության զարգացմանը և կստեղծի որոշակի քանակի աշխատատեղեր:

Առանցքային բառեր. *ճանապարհ, տրանսպորտ, սպասարկում, զբոսաշրջություն, համալիր*

Ճանապարհային սպասարկման օբյեկտների և ճանապարհամերձ հանգստի համակարգերի նպատակային կազմակերպումը տրանսպորտային հաղորդակցությունների ազդեցության գոտիներում առաջին հերթին նախատեսված են ավտովարորդներին, ուղևորներին և ավտոտուրիստներին համապատասխան ծառայությունների մատուցման և տրանսպորտային միջոցների սպասարկման համար: Դրանք կարող են օգտագործվել նաև միջպետական, որոշակի բնակավայրերի միջհամայնքային անհարաժեշտ կարիքների իրականացման և բնակավայրերի որոշակի խնդիրների լուծման նպատակներով:

Ճանապարհային սպասարկման օբյեկտները կարող են դասակարգվել հետևյալ խմբերի՝ համապատասխան իրենց գործառնական նշանակության.

1. **ճանապարհային ծառայության,**
2. **սահմանային սպասարկման,**
3. **տրանսպորտային սպասարկման,**
4. **միջազգային հանդիպումների և մեծածախ առևտրի համալիրներ,**
5. **առևտրային կենտրոններ,**
6. **զբոսաշրջային ծառայությունների մատուցման, հանգստի և ժամանցի համալիրներ:**

1.Ճանապարհային ծառայության կետեր

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքով սահմանված են [1].

ա) ճանապարհային ծառայության շինություններ, որոնք ծառայում են դրանց շինարարությանը, նորոգմանը և պահպանմանը: Դրանք են՝ արտադրական բազաները, վարչական և բնակելի շենքերը, ճանապարհների պահպանության հենակետերը, շինանյութերի պահեստները և այլն,

բ) ճանապարհային պահպանության հենակետ՝ ճանապարհների ձմեռային պահպանության, ինչպես նաև կամուրջների և թունելների պահպանության ծառայությունների շենքեր ու շինություններ,

գ) ճանապարհային ինժեներական շինություններ՝ ճանապարհի մասեր, որոնք ապահովում են ճանապարհների շահագործման և դրանցից օգտվելու պահանջները: Դրանք են՝ կանգառները, ավտոտաղավարները, արագացման և արգելակման գոտիները, տրանսպորտային միջոցների կայանատեղերը, հանգստյան (ժամանակավոր) գոտիները, տեսահարթակները, ձյունապաշտպան անտառաշերտերը, տնկիները, օտարման շերտից դուրս գտնվող շրջանցող ուղիները, հակահեղեղային և հակաձնահոսային կառույցները, հակավթարային գրպանները, ճանապարհային կապի և լուսավորության շինությունները և այլն (նկ. 1):

Ճանապարհային ծառայության կետ

Ճանապարհային ծառայության կետ

Ճանապարհային ծառայության կետ



Ճանապարհային սպասարկման կետ (սխեմա)

Նկ. 1. Ճանապարհային ծառայության օբյեկտներ

2.Սահմանային սպասարկման կետեր

Հիմնականում նախատեսվում են միջպետական ճանապարհների սահմանամերձ գոտիներում, դրանք են.

ա) սահմանապահ անցակետ,

բ) մաքսային անցակետ (նկ. 2),

գ) ազատ տնտեսական գոտի՝ հատուկ տարածք, որը համարվում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից դուրս և որտեղ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքով սահմանված առանձնահատկություններին համապատասխան [2]: Կարող են լինել տարբեր գործառնական տեսակների ազատ տնտեսական գոտիներ: Առավել ցանկալի է ստեղծել սահմանամերձ գոտում,

դ) լոգիստիկ կենտրոն՝ մասնագիտացված ձեռնարկություն, որի հիմնական գործառույթներն են՝ բեռների մշակումը և պահպանումը, մաքսային ձևակերպումները: Տրանսպորտային լոգիստիկ կենտրոններն իրենցից ներկայացնում են ազատ տարածքներ բեռնափոխադրող և տրանսպորտային ընկերությունների համար, ունեն բեռնատար ավտոմեքենաների կայանատեղեր: Կարող են իրականացնել տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում, մաքսային, բրոքերային և այլ տեսակի ծառայություններ: Առավել ցանկալի է ստեղծել սահմանամերձ գոտում:

Բագրատաշենի մաքսակետ



Մաքսատան նախագիծ

Բագրատաշենի սահմանապահ կետ

Սահմանապահ կետ

Նկ. 2. Սահմանային սպասարկման օբյեկտներ

3. Տրանսպորտային սպասարկման կետեր

Տրանսպորտային սպասարկման հանգույցների կազմավորումը նպատակ ունի ստեղծել միջպետական, միջքաղաքային երթուղային, ինչպես նաև բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների կայանման գոտի. Երևան մտնող տրանսպորտային միջոցների համար հիմնական և ժամանակավոր կանգառներ, վերանորոգման, լվացման և վառելիքի լցման կայաններ, իսկ վարորդների և ուղևորների համար ձևավորել ժամանակավոր հանգստի, սննդի ընդունման, հնարավոր է նաև՝ առևտրի բարենպաստ պայմաններ (նկ. 3): Նշված միջոցառումը հնարավորություն կստեղծի նաև նվազեցնելու քաղաք մուտք գործող տրանսպորտային միջոցների անմիջական հոսքը՝ այստեղից քաղաքային տրանսպորտից օգտվելու պայմանով, ինչպես նաև նվազեցնել այլ բնակավայրերի և մերձքաղաքային երթուղային և այլ ավտոմեքենաների տարանցիկ երթևեկության հոսքը քաղաքի միջով:

Ընդհանուր տեսարան

Ավտոկայանատեղի

Սրճարան

Տրանսպորտային սպասարկման կետ

Նկ. 3. Տրանսպորտային սպասարկման համալիրներ

Համալիրի հնարավոր կազմը՝

- միջքաղաքային երթուղային ավտոկայան,
- ավտոկայանատեղի ուղևորատար, բեռնատար և մարդատար ավտոմեքենաների համար,
- ավտոմեքենաների վերանորոգման և լվացման կետեր,
- ավտովառելիքի լցակայաններ,
- հասարակական զուգարաններ,

- սննդի ընդունման ամառային և փակ հաստատություններ (սրճարան, սննդի արագ ընդունման կետեր),
- ժամանակավոր հանգրվան (մոթել),
- բուժսպասարկման կետ և դեղատուն,
- կենցաղսպասարկման կետեր՝ վարսավիրանոց, հագուստի մաքրում և այլն,
- հուշանվերների և զովացուցիչ ջրերի վաճառակետեր,
- տարածքային հնարավորության դեպքում՝ նաև խոշոր և փոքր առևտրական սրահներ, մեծ և փոքր շուկաներ:

Տրանսպորտային սպասարկման նման հանգույցներն առավել նպատակահարմար է ձևավորել ք.Երևանն օղակաձև շրջանցող ճանապարհների հատման հանգույցներում: Այն կնպաստի նաև մայրաքաղաքի էկոլոգիական վիճակի բարելավմանը [3]:

4. Միջազգային գործարար հանդիպումների և մեծածախ առևտրի համալիրներ

Միջազգային գործարար հանդիպումների և մեծածախ առևտրի համալիրն իրենից ներկայացնում է բազմաֆունկցիոնալ գործարար կենտրոն, որը կարող է ունենալ հետևյալ կազմը.միջազգային և տարածաշրջանային գործարար հանդիպումների կենտրոն, միջազգային և տարածաշրջանային գիտական կենտրոն՝ գիտաժողովների անցկացման համապատասխան ենթակառուցվածքներով, մեծածախ առևտրի կենտրոն՝ համապատասխան ցուցարահներով, գրասենյակներ՝ առևտրային ժամանակավոր ներկայացուցչությունների համար:

Համալիրը նաև պետք է ապահովված լինի նշված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ սպասարկում ապահովող հետևյալ համապատասխան ենթակառուցվածքներով՝ հյուրանոց, ռեստորաններ, սրճարաններ, բար, ժամանցի այլ օբյեկտներ, մարզական և հանգստի գոտի, ավտակայանատեղեր բեռնատար և մարդատար ավտոմեքենաների համար, ավտոսպասարկման կետեր (նկ. 4):

5.Առևտրային կենտրոններ (համալիրներ)

Ավտոմայրուղիներին հարակից տարածքներում խոշոր առևտրային կենտրոնների ստեղծումը միջազգային պրակտիկային համապատասխան համարվում է խոշոր քաղաքները բեռնաթափելու միջոցներից մեկը և ենթադրում է քաղաքներից դուրս մեծածախ և մանրածախ առևտրի խոշոր համալիրների կազմակերպում: Համալիրն իրենից կներկայացնի բազմաֆունկցիոնալ կենտրոն, որտեղ առևտրային գործառույթներից բացի կարող են նախատեսվել նաև հասարակական սննդի կետեր (սրճարան, արագ սննդի ընդունման կետեր), անհրաժեշտ քանակի ավտակայանատեղեր, լիցքավորման և սպասարկման կայան, մանկական ժամանցի կետեր, կարճատև հանգստի գոտի (նկ. 5):

Օրինակ՝ Երևան-Սևան ավտոմայրուղու վրա նման ծրագիրը հնարավորություն կստեղծի ակտիվացնելու Երևան-Սևան-Դիլիջան-Իջևան-Բագրատաշեն-Վրաստանի սահման միջպետական, Երևան-Սևան-Գավառ-Մարտունի զբոսաշրջային ճանապարհների երթևեկությունը, ինչպես նաև աշխուժացնելու և զարգացնելու մոտակա բնակավայրերի տնտեսությունը և ստեղծելու համապատասխան աշխատատեղեր:



Բազմաֆունկցիոնալ միջազգային առևտրի կենտրոն

Բազմաֆունկցիոնալ գործարար կենտրոն

Բազմաֆունկցիոնալ մեծածախ առևտրի կենտրոն

Բազմաֆունկցիոնալ գործարար կենտրոն

Նկ. 4. Միջազգային հանդիպումների և մեծածախ առևտրի համալիրներ

Բազմաֆունկցիոնալ առևտրի կենտրոն

Առևտրի կենտրոն

Առևտրի կենտրոն

Առևտրի կենտրոն

Նկ. 5. Առևտրական կենտրոններ

6. Զբոսաշրջային ծառայությունների մատուցում, հանգստի և ժամանցի համալիրներ

Զբոսաշրջային ծառայությունների մատուցման համալիրը (զբոսաշրջային կենտրոն) բաղկացած է լինելու հիմնականում երկու ֆունկցիոնալ գոտուց.

ա) հյուրանոցային գոտին (կարճաժամկետ և երկարաժամկետ) ներառում է հյուրանոցային մասնաշենքեր, մոթելներ, ակումբներ, սրճարաններ, ռեստորաններ, բարեր, կոնֆերենց դահլիճներ, խաղատուն (կազինո), ինչպես նաև առևտրական և զբոսաշրջային տեսականիով համապատասխան խանութներ: Հյուրանոցային հատվածը պետք է բաղկացած լինի երկու մասից՝ խաղատների այցելուների և ընտանիքներով ժամանցի ու հանգստի նպատակով այցելած հյուրերի համար,

բ) ժամանցային և հանգստի գոտում նախատեսվում է ստեղծել մանկական և մեծահասակների համար ժամանցի թեմատիկ զբոսայգիներ՝ համապատասխան ճեմուղիներով, ատրակցիոններով, ջրաշխարհով, սրճարաններով և ամառային համերգասրահով:

Ժամանցային գոտին պետք է ունենա իր թեմատիկ ենթագոտիները՝ որոշակի առանձնահատկություններով և ցուցադրությամբ: Այստեղ ժամանցի և զվարճությունների ցանկալի ժամկետը պետք է լինի հնարավորինս այնպիսին, որպեսզի այցելուն ցանկանա այն ամբողջությամբ ընկալելու նպատակով հաճախել նաև հաջորդ օրը՝ գիշերելով հարակից հյուրանոցում:

Համալիրում նշված գործառույթներից բացի կնախատեսվեն անհրաժեշտ քանակի ավտակայանատեղեր, ավտոսպասարկման և լիցքավորման կայաններ (նկ. 6): Նշված համալիրի ստեղծումը հնարավորություն կտա նաև աշխուժացնելու և զարգացնելու մոտակա բնակավայրերի տնտեսությունը և ստեղծելու աշխատատեղեր:

Հայաստանի համար սույն ծրագրով լավագույն լուծումներից մեկը կարող է լինել ք.Երևանից դեպի գեղատեսիլ Սևանա լիճ ձգվող ավտոմայրուղու և դեպի Ծաղկաձոր ու Հանքավան տանող ճանապարհի հանգույցին հարակից տարածքում խոշոր զբոսաշրջային կենտրոնի՝ հյուրանոցային և ժամանցային համալիրի կազմավորումը:

Ճանապարհային սպասարկման օբյեկտների և ճանապարհամերձ հանգստի համակարգերի (համալիրների) տեղակայման և կազմավորման քաղաքաշինական հիմնավորումը

Ճանապարհային սպասարկման և ճանապարհամերձ հանգստի օբյեկտները նպաատակահարմար է տեղադրել ք.Երևանից դուրս եկող հետևյալ հիմնական մայրուղիների վրա (նկ. 7).

ա)Երևան-Սևան-Դիլիջան-Իջևան-Նոյեմբերյան-Բագրատաշեն (պետական սահմանակետ դեպի Վրաստան), (Մ-4 միջպետական ավտոճանապարհ),

բ) Երևան-Ջրվեժ-Զորաղբյուր-Գառնի-Գեղարդ, (Հ-3 հանրապետական ավտոճանապարհ),

գ) Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի-պետական սահմանակետ դեպի Վրաստան, (Մ-1 միջպետական ավտոճանապարհ),

դ) Երևան-Արտաշատ-Արարատ-Երասխ (պետական սահմանակետ Ադրբեջանի հետ)-Եղեգնաձոր-(Ջերմուկի խաչմերուկ)-(Տաթևի խաչմերուկ)- Սիսիան-Գորիս-Կապան-Մեղրի-

պետական սահմանակետ դեպի Իրան, ինչպես նաև Գորիսից դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (Շուշի-Ստեփանակերտ, Մ-12 միջպետական ավտոճանապարհ),

ե) Երևան-Էջմիածին-Արմավիր-Թուրքիայի սահման (Մ-5 միջպետական ավտոճանապարհ): Էջմիածնի ուղղությամբ այն նպատակահարմար կլինի նաև «Զվարթնոց» օդանավակայանի հարևանությամբ [4]:

Հյուրանոց

Մոթել

Հյուրանոցային համալիր

Հանգստի և ժամանցի համալիրի գլխավոր հատակագիծ

Նկ. 6. Զբոսաշրջային ծառայությունների մատուցման, հանգստի և ժամանցի համալիրներ

Նկ. 7. Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների քարտեզ

Նկ. 8. «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցք

Միաժամանակ առաջիկա ժամանակահատվածում էական և լուրջ ուշադրության է արժանի Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ ներդրումային ծրագրով կառուցվող «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի համապատասխան կահավորումը, որի էական հատվածը համապատասխանում է վերը նշված ուղղություններին (նկ. 8): Յուրաքանչյուր օբյեկտի տեղակայման տեղի ընտրությունն ըստ գործառնական նշանակության պետք է կատարվի մանրամասն վերլուծության և համապատասխան հիմնավորման հիման վրա:

С.Б.Оганян,
Н.Т.Барсегян

ФУНКЦИОНАЛЬНАЯ КЛАССИФИКАЦИЯ ОБЪЕКТОВ ПРИДОРОЖНОГО ОБСЛУЖИВАНИЯ В ЗОНАХ, ПРИМЫКАЮЩИХ К МЕЖГОСУДАРСТВЕННЫМ И РЕСПУБЛИКАНСКИМ ДОРОГАМ

На основе международного и местного опыта произведена полная классификация объектов дорожного обслуживания основных магистралей республики, исходя из их функционального и целевого назначений и с учетом их необходимости и целесообразности существования на территории Республики Армения. Приведены новые подходы и рекомендации в данном направлении, при реализации которых существенно увеличатся виды услуг на основных магистралях республики, улучшится качество дорожного обслуживания, что будет способствовать стимулированию развития экономики близлежащих населенных пунктов и созданию определенного числа рабочих мест.
Ключевые слова: *дорога, транспорт, сервис, туризм, комплекс*

S. B. Ohanyan,
N. T. Barseghyan

OPERATIONAL CLASSIFICATION OF ROAD MAINTENANCE FACILITIES IN THE BUFFER ZONES AROUND THE INTERSTATE AND NATIONAL ROADS

In the article a complete classification of the road maintenance facilities on the main national highways is realised based on the international and local experience, on the basis of its operational importance and target value and taking into account their necessity and expediency on the territory of the Republic of Armenia. In essence, it reflects also on new approaches and proposals in this regard, the implementation of which will significantly increase the range of services offered on the main national highways, will improve the quality or road service and promote economic development and create a certain number of jobs in the surrounding areas.
Keywords: *road, transport, services, tourism, complex*

Գրականություն

1. **Ավտոմոբիլային** ճանապարհների մասին. ՀՀ օրենքը. - Երևան, 2006:
2. **Ազատ** տնտեսական գոտիների մասին. ՀՀ օրենքը. - Երևան, 2011:
3. **Երևանի** ագլոմերացիայի տարածքային հատակագծման նախագիծ/ «Երևաննախագիծ» ՓԲԸ. – Երևան, 2006:
4. **Երևան** քաղաքի քաղաքամերձ գոտու տարածքային հատակագծման նախագիծ/ «Քաղաքաշինության ԳՀՆԻ» ՓԲԸ. - Երևան, 2007:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Օհանյան Սիրեկան Բորիսի, Ճ.թ., պրոֆեսոր *(ՀՀ, ք. Երևան) - Երևանի քաղաքապետարանի «Երևաննախագիծ» ՓԲԸ տնօրեն, (+374)10562711, yerevanproject@yandex.ru,* ***Բարսեղյան Նարեկ Տիգրանի*** *(ՀՀ, ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ակ,Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմների լաբորատորիա, կ.գ.ա., ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, ասպիրանտ, (+374)99707077, narek_barseghyan@mail.ru:*
Оганян Сирекан Борисович, канд. архит., профессор *(РА, г.Ереван) - директор ЗАО «Ереванпроект» при мэрии г. Еревана, (+374) 10562711, yerevanproject@yandex.ru,* ***Барсегян Нарек Тигранович*** *(РА, г. Ереван)- НУАСА, проблемная лаборатория Архитектуры и строительства, м.н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия изящных искусств и истории, аспирант, (+374) 99707077, narek_barseghyan@mail.ru.*
Ohanyan Sirekan Boris, doctor of philosophy (Ph.D.) in Architecture, professor *(RA, Yerevan) - head of "YerevanProject' institute of municipality of Yerevan, (+374) 10562711, yerevanproject@yandex.ru,* ***Barseghyan Narek Tigran*** *(RA, Yerevan) – NUACA, Problem Laboratory of Architecture and Construction, scientific researcher, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Architecure Heritage, Fine Art and History, postgraduate student, (+374) 99707077, narek_barseghyan@mail.ru.*

Ներկայացվել է՝08.12.2015թ.
Ընդունվել է տպագրության՝ 11.12.2015թ.